
ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ
ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

ՀԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն տանն Միսական» երկը պատմական նշանավոր գործերից է, որ գրվել է XIII դարավերջին: Լեզվաբանական քննության համար այն բավական արժեքավոր է: Պատմությունը շարադրված է գրաբարով՝ ներառելով ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ քերականական իրողություններ, որոնք էլ ուշագրավ են դարձնում այն:

Այս առումով դիտարկենք բայի դիմավոր ձևերը և դրանց գործառական առանձնահատկությունները Ստ. Օրբելյանի «Պատմություն տանն Միսական» երկում:

Հայտնի է, որ գրաբարի բայական համակարգն ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Սահմանական եղանակն ունի հետևյալ ժամանակաձևերը՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ստորադասականը՝ առաջին և երկրորդ ապառնի, իսկ հրամայականը՝ բուն, հորդորական և արգելական հրամայական ժամանակաձևերը: Նշված ժամանակաձևերից ներկան, անցյալ անկատարը, առաջին ապառնին և արգելական հրամայականը կազմվում են ներկայի, իսկ մյուսները՝ անցյալ կատարյալի հիմքից՝ խոնարհման համապատասխան վերջավորություններով:

Գրաբարի բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապառնի դերբայներով և եւմ, լինիմ օժանդակ բայերով, որոնք երբեմն փոխարինվում են կայ և ունիմ բայերով: Հարկ է նշել, որ գրաբարի պարզ ժամանակաձևերը, բացի հիմնականից, կարող են դրսևորվել երբեմն երկրորդական կիրառություններով՝ իբրև այլ ժամանակաձևերի արտահայտիչներ:

Ներկա

Ներկա ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին համընկնող գործողություն՝ և «Պատմություն տանն Միսականում» հանդիպում է մեծ մասամբ իբրև ընդհանրական ներկա: Բերենք օրինակներ, որտեղ բայաձևերը հանդես են գալիս իբրև բուն կամ սովորական ներկա՝ ...Կարգէ սա գեղեցիկ յօրինուածով և գովելի կարգօք...²: Եւ հրամայէ նոցա...(9): Զի ի իւելաց եւս ցնորին և յանհնարինս ձեռնարկեն...(2):

¹ Ա. Յ ու զ բ ա շ յ ա ն. Գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը և նրանց ձևագործառական հետազոտության զարգացումը, Երևան, 2004, էջ 20:

² Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմություն տանն Միսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1961, էջ 9: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում՝ մեջբերումների կից:

Ներկան երկրորդական կիրառությամբ արտահայտում է արդի հայերենի ըղձական եղանակի ապառնու իմաստ, որը հիմնականում հանդես է գալիս բարդ ստորադասական նախադասության պայմանի և նպատակի պարագա երկրորդական նախադասությունների կազմում. օրինակ՝ *Եւ դարձեալ երեքկին քան զնոյն այլ զօր բովանդակեալ Շապհոյ ասաց. «Եթէ ի վերջ ոք դառնայ՝ սպանէք» (դառնա), (24):*

Երկրորդական կիրառությամբ՝ հատկապես պայմանի պարագա երկրորդական նախադասություն ունեցող գլխավոր նախադասության կազմում ներկան հանդես է գալիս նաև ժամանակակից հայերենի պայմանական եղանակի ապառնու իմաստով: Նման կիրառությամբ նույնպես հանդիպում է. *Զիս ընդ գետէս ի բաց անցո, եթէ ոչ հարկանեմ և վիրաւորեմ զքեզ... (կիսիեմ, կվիրավորեմ), (32): ...Ի քոյդ դարձուցանեմ դաւանութիւն և այրեմ զթուղթոյ... (կդարձնեմ, կայրեմ), (84):*

Ներկան հանդես է գալիս նաև հարկադրական եղանակի նշանակությամբ՝ *...Այլ մեծ կրտսերագոյնքս հնագանդիմք երիցագոյն հրամանաց նոցին... (պիտի հնագանդվենք), (85):*

Որոշ դեպքերում ներկան հանդիպում է անցյալ ժամանակի իմաստով՝ իբրև պատմական ներկա. օրինակ՝ *Եւ յերկրորդ ամին Խոսրովու՝ Հայոց թագաւորի, Բարբիկ Միւնեաց տէր լինի և ի նմանէ առնու զտէրութիւն... (տէր դարձաւ, ստացաւ), (27): Այս առումով աչքի է ընկնում հատկապես ասել բայը, որն ուղղակի խոսքից առաջ ունի խիստ ընդգծված արտահայտություն և գրեթե միշտ թարգմանվում է անցյալի նշանակությամբ. օրինակ՝ *...Խորհուրդ արարեալ ապա իշխանին Թեոդորոսի Ռշտունոյ այլովք նախարարօք Հայոց ընդ կաթողիկոսին Եզրի՝ ասեն... (ասացին), (83): Գնացին առ թագաւորն և ասեն... (85):**

Անցյալ անկատար

Գրաբարի այս ժամանակաձևը, որն արտահայտում է անցյալում անկատար, դեռևս ընթացքի մեջ գտնվող գործողություն, իր հիմնական նշանակությամբ համապատասխանում է ժամանակակից հայերենի անցյալ անկատար ժամանակին: Ստ. Օրբելյանի երկում անցյալ անկատարը հանդիպում է իր հիմնական նշանակությամբ՝ որոշ բացառություններով: *Օրինակ՝ ...Մա գեղեցիկս յարդարէր զկարգ իշխանութեան իւրոյ ծախէր զամենայն փարթամութիւնս իւր և զկեանս՝ ի գործ աստուածապաշտութեան... (126): Որ ունէր յինքն նիշ ներկուածի արեանն Յիսուսի... (222): Եւ զպատիւն գոր ունէին զհսաչն որ առաջի ընթանայր... (222):*

Երկրորդական նշանակությամբ անկատարը գործածվում է պատմական ժամանակի իմաստով և այս դեպքում այն համապատասխանում է ժամանակակից հայերենի ներկային ու անցյալ կատարյալին: *Օրինակ՝ ...Եկն ի տեղին և տեսանէր զայնքան մեծամեծ վնաս և զանհնարին աղետսն՝ անտանելի սգով և անչափելի ողբովք լայր և կոծէր դառնապէս (տեսաւ, լաց ու կոծ արեց), (230): Տեսեալ զայն առնն կարկեալ թուլանայր... (թուլանում է), (102): Եւ ամենայն յօղուածքն խաղայր, շարժէր, դողայր մեծաւ սուկմամբ (շարժվում է, ցնցվում է, դողում է) (102): Յոբմէ բագում բժշկութիւնք լինէին (լինում են), (101):*

Այն փաստը, որ անցյալ անկատարը երկրորդական նշանակությամբ գործածվում է արդի հայերենի ընդհանուր և պայմանական եղանակների անցյալ ժամանակով, Օրբեյանի երկում չի հաստատվում, նման օրինակներ չկան: «Հինգերորդ դարում մատենագրության մեջ կարելի էր գտնել անցյալ անկատար ժամանակաձևի -իւր կրավորաձև վերջավորության հատուկենտ օրինակներ (դրանք ավելի ընդգծված էին հունաբան հայերենում), իսկ այս երկում գրեթե սովորական են, ինչպես՝ ճանաչիւր (հ. 1-ին, էջ 202), կոչիւր (հ. 1-ին, էջ 207, 213, 301), յորջորջիւր (հ. 1-ին, էջ 212, 219) և այլն: Նշված վերջավորությունը կրավորականության իմաստի արտահայտման համար դրվում է ներգործական սեռի բայերի վրա, բայց այստեղ հանդիպում է նաև չեզոք սեռի բայի հետ, օրինակ՝ եղանիւր (հ. 1-ին, էջ 83)»³:

Առաջին և երկրորդ ապառնի

Գրաբարի ստորադասական եղանակի ժամանակաձևերը շատ դեպքերում ունեն կիրառության տարբեր դրսևորումներ, սակայն միևնույն նախադասության մեջ կարող են փոխարինել իրար՝ համապատասխանելով արդի հայերենի ընդհանուր, պայմանական և հարկադրական եղանակների ապառնուն: Հաճախ միևնույն նախադասության մեջ կարելի է հանդիպել թե՛ առաջին, թե՛ երկրորդ ապառնիների կիրառության. օրինակ՝ ...Եւ աւերեսցին քաղաքք և եղիցին սահմանք նոցա անկոխք, չի պակասեցին մարդիկ և պղծեսցի երկիր արեամբ... (108 էջ): Նշված բայաձևերը (նախատիցեն, չարչարիցեն՝ առաջին ապառնի, ասացեն՝ երկրորդ ապառնի) արտահայտում են ընդհանուր եղանակի նշանակություն:

Ստ. Օրբեյանի երկում առաջին ապառնին սակավ է հանդիպում: Որոշ դեպքերում թե, եթե, զի, որ, ոք, ուր, յորժամ, ուստի և այլ շաղկապներից ու հարաբերական բառերից հետո գործածվող բայը կարող է արտահայտվել այս ժամանակաձևով և համապատասխանել արդի հայերենի վերոհիշյալ եղանակներին. օրինակ՝ Յայնժամ յանկարծակի յարիցէ... (կհարձակվի), (110): Երանի է ձեզ յորժամ նախատիցեն և չարչարիցեն (նախատեն, չարչարեն), (110): Առնիցեն վասն իմն... (Պիտի կատարի ինձ համար), (130):

Առաջին ապառնին հանդես է գալիս նաև որոշչային նշանակությամբ, այս դեպքում աշխարհաբար թարգմանվելով հարակատար դերբայով՝ ...Յարիցէ ի վերայ նորա թագաւորն Յունաց արմտութեամբ մեծաւ, և զարթիցէ որպէս այր ի քնոյ (ինչպէս քնից արթնացած մարդ), (110):

Առաջին ապառնին գործածվում է մի՛ արգելական բառ - մասնիկի հետ՝ իբրև արգելական ապառնի՝ ժխտական ընդհանրանի իմաստով. օրինակ՝ Զի մի՛ բնաւին ջնջեալ կորիցէ... (ջնջվի ու չկորչի), (132): Զի մի՛ կորիցէ, ասէ, յիշատակ տեառն ի-

³ Տե՛ս Մ տ ե փ ա ն ո ս Օրբեյան. Մյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 53: Ա. Աբրահամյանը հղում է Պատմության հետևյալ հրատարակությունը. Պատմություն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբք Կարապետ վարդապետ Շահնագարեանց, հ. Ա, Բ, Փարիզ, 1959:

մոյ Աշոտոյ (Նկորչի), (172): Զի մի՛ ներհակ հակառակութիւն ինչ լինիցի (չառաջանա), (34):

Գրաբարում շատ տարածված է այս ժամանակաձևի՝ հարցական բնույթի նախադասություններում կիրառվելը, սակայն Օրբեյյանի երկում այն նման կիրառությամբ հանդես չի գալիս: Այս երկում հարցական նախադասությունները գրեթե միանշանակ ունեն ներկա ժամանակով արտահայտված բայաձև. օրինակ՝ ...Ընդէ՞ր վիճիք... (85): Ընդէ՞ր կարօտիմք... (17): Հարցական նախադասությամբ կարող են հանդես գալ երբեմն երկրորդ ապառնի բայաձևերը, ինչպես՝ ...Ասացե՞ն մեզ, որ բաժանեն զմարդն յԱստուծոյ Բանէն... (90): Արդեօք և Որդի մարդոյ եկեալ՝ զոցէ՞ հաւատս յերկրի... (109):

Ստ. Օրբեյյանի «Պատմութիւն տանն Միսական» երկում բավական լայն ու ծավալուն կիրառություն ունի երկրորդ ապառնին: Հատկապես թէ, եթէ, զի, ինչպես նաև ապա եթէ, զի եթէ շաղկապներից և որ, ոք ուր, յորժամ, ուստի և հարաբերական այլ բառերից հետո գործածվող բայն ավելի հաճախ դրվում է երկրորդ ապառնիով և իմաստով էլ համապատասխանում է ոչ միայն ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին, այլև սահմանական եղանակի ներկային: Այսպես՝ Եթէ ի վերջոք ոք դառնայ՝ սպանէք ... (դառնա), (24): Հրաման էլ յարքունուստ եթէ մարդ և անասուն ձեզ Արեւաց աշխարհի գօրաց ի ծառայութիւն լիցին (լինեն), (24): Եթէ ոչ կարէք ակն յայտնի Արեւացս զնդի ժողովոց ցուցանել զգիր նախագահութեան, զպատիւ և զտուն, զհող և զջուր և զստացուածս ձեր Արեւացս աշխարհի ազատ արանցս շնորհեսցուք, ... արձակեսցուք (կտանք, կթողնենք), (20): Նշենք, որ երկրորդ ապառնին հանդես է գալիս մեծ մասամբ պայմանական եղանակի նշանակությամբ՝ եղից(18), կարգեցից(19), ցուցից (15), գթացից (25), հասցես (25) և այլն:

Եղիցի և ընտանասցին, սովասցին և ապականեսցին և կոտորեսցին ամենայն փայտք անտառի... (108): Ընդգծված բայաձևերը արտահայտում են հարկադրական եղանակի նշանակություն (պիտի ընտանեցվեն, պիտի սովեն, պիտի ապականվեն, պիտի հալածվեն և այլն):

Ինչպես արդեն նշել ենք, երկրորդ ապառնին կարող է հանդես գալ նաև սահմանական ներկայի նշանակությամբ. օրինակ՝ ... Եւ ոչ խոստովանեսցի զնոյն անախտակիր Աստուածն Բան մարմնովն ախտակրեալ՝ որպէս և գրեալ է, նգովեսցի (չի ընդունում), (90): Այս ժամանակաձևը մեծ մասամբ հանդես է գալիս այն դեպքում, երբ խոստովանում է գործողություն կատարելու ցանկություն: Այս իմաստով գործածվելիս այն մեծ մասամբ դրվում է հոգնակի առաջին դեմքով: Օրինակ՝ Փրկութեան քում սպասեսցուք՝ Տէր (114): Եկ մենամարտեսցուք ես և դու միով միակաւ (25): Կարճ ի կարճոյ շարագրեսցուք (96): Եւ մեք ընտրեսցուք... առաքեսցուք առ ձեզ... (206):

Երկրորդ ապառնին երրորդ դեմքով գործածվում է նպատակի և պայմանի պարագա երկրորդական նախադասություններում, իսկ աշխարհաբար սովորաբար թարգմանվում է ըղձական եղանակի ապառնիով և թող վերաբերականով: Օրինակ՝ ... Լերինք ցնձացեն առաջի Տեառն, զի գայ և գայ նա ի դատել զերկիր... (թող

ցնծան), (113): Որոյ բարեխօսութեամբ գրասցի Քրիստոս զաշխարհս այս ... (թող գրա), (117): Բացի այդ, նպատակի կամ պայմանի պարագա երկրորդական նախադասություններում ժամանակային այս ձևը շատ հազվադեպ հանդիպում է երկրորդ դեմքով՝ արտահայտելով ըղձական ապառնու նշանակություն. այսպես՝ Քանզի վասն ձեր աղքատացաւ մեծատունն, սսէ առաքեալն, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք (մեծանաք), (90): Իբրև արգելական ապառնի՝ ժխտական ըղձականի իմաստով, գործածական է հատկապես երկրորդ ապառնին. օրինակ՝ Մի՛ ջնջեցի մեծ յիշատակ նոցա (չջնջես), (154): Մի՛ ելցեն յաշխարհացս իւրեանց... (111): Եւ դու մի՛ պահանջեցես... (11): Եւ յայսմհետէ մի՛ ոք իշխեսցէ հակառակել այսմ անկատար վճոյս... (159): Զի մի բնաւին ջնջեալ կորիցէ յիշատակ նոցա (132):

Ինչպես տեսնում ենք, նշված ձևերը ժխտական ըղձականի նշանակություն ունեն, և վերջին օրինակներից էլ երևում է՝ երբեմն մի՛ արգելական բառ-մասնիկը և բայերը բաժանվում են միմյանցից տարբեր բառերով ու կապակցություններով: Արդեն նշել ենք, որ արգելական ապառնիի իմաստով գործածվում նաև ստորադասական առաջին ապառնին:

Պակասավոր բայեր

Այստեղ հարկ է ներկայացնել նաև գրաբարի բուն պակասավոր բայերի գործածության դեպքերը՝ հաշվի առնելով, որ դրանք իրենց տարբեր դրսևորումներով հանդիպում են Ստ. Օրբելյանի երկում: Պակասավոր բայերը՝ եմ, պարտիմ, գոլ (լինել, գոյություն ունենալ), կայ (կա) և չիք (չկա), բացի գոգ (ասա) բայից, հանդես են գալիս ձևագործառական հետևյալ առանձնահատկություններով:

ա) Երբ եմ, գոլ բայերի եզակի և հոգնակի երրորդ դեմքերը, ինչպես նաև չիք բայը գործածվում են ուղղական հոլովով բառերի հետ, ապա արտահայտում են կա, գոյություն ունի իմաստը. օրինակ՝ Թէ՛ հնար իցէ, անցցէ զինն բաժակս... (Եթէ՛ հնար կա), (92): Դև գոյ ի քեզ... (դև կա քո մեջ), (55): Բայց այլ ևս ունի գաւառս յոլովս, գորս ոչ յիշեցաք... Է՛ որ փոխեալ են անուանք սոցա, է՛ որ յայլ և այլ գաւառս բաժանեալ են... (կա), (7):

բ) Նշված բայերի եզակի և հոգնակի երրորդ դեմքերը, ինչպես նաև չիք բայը գործածվում են սեռական (հազվադեպ նաև տրական) հոլովով բառերի հետ՝ արտահայտելով ունենալու իմաստ: Օրինակ՝ Զիք ումեք քաղցրագոյն քան զծնօղս և ոչ քան զգավառ իւր (մարդ իր ծնողներից ու գավառից ավելի քաղցր բան չունի), (25): Ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի (չուներ), (38): Գոյ քուն և իմաստնոյ... (201):

գ) Կա բայը գոյականի ուղղական հոլովաձևի հետ արտահայտում է նաև մնալու իմաստ. օրինակ՝ Որ մինչև ցայսօր կայ և կատարէ մեծամեծ սքանչելիս... (մնում է), (117): Զի աղանդն հեթանոսական դեռ ևս դողեալ կայր ուրեք ուրեք... (մնում էր տեղ – տեղ), (37): Ընդէ՞ր այդպէս համառեալ կասս ... (55):

դ) Եմ, կայ բայերի եզակի և հոգնակի երրորդ դեմքերը, գործածվելով ի (յ) նախդրով տրական և հայցական հոլովներով ներգոյականի իմաստ ունեցող բայերի հետ՝

արտահայտում են գտնվելու, կա իմաստ. օրինակ՝ *Եւ էր Յազկերտի հագարապէտ մի յոյժ խորհրդագէտ Միհր Ներսէհ անուն, և կայր յԱտրպատական աշխարհի...*(41):

Նախդրով տրական կամ հայցական հոլովներով բառերի հետ հանդես գալով՝ եւ օժանդակ բայը երբեմն կարող է զեղջվել. օրինակ՝ *Խոհականութիւն է սկիզբն շնորհաց. զի ամենան շնորհք որ ի մարդիկ հոգևոր և մարմնական...նախ խոհականան և խորհեալ լինի...*(2):

Պետք է նշել նաև, որ եւ օժանդակ բայի եզակի և հոգնակի երրորդ դեմքերը, գործածվելով ուղղական հոլովով բառերի հետ, նույնպես կարող են զեղջվել, ինչպես՝...*Սկիզբն ամենայն գոյացութեանց Աստուած, սկիզբն ամենայն բարեաց սէր, սկիզբն ամենայն շնորհաց խոհականութիւն (1):*

Ժխտական խոնարհում

Գործողության ժխտումը գրաբարում արտահայտվում է ոչ և չ մասնիկներով, որոնք դրվում են սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ստորադասականի առաջին և երկրորդ ապառնիների վրա: *Բերենք օրինակներ՝ Վասն այնորիկ ոչ երևին կարգք իշխանացն (11): Եւ յուրով երկօք որոնեալ՝ ոչ գտաք... (4): Յաղագս որոյ և մեք ոչ կամեցաք անփոյթ առնել... (4): Ոչ հետևեցաք... (4): Ի գալն յաշխարհս Հայոց այնուհետև ոչ դադարէր իր շրջելոյ սուրբն Գրիգոր (12): Ոչ գոյր... (136): Ոչ կարէր... (136): Եթէ ոչ թողցէ այր զհայր իւրն զմայր... (176): Քրիստոսիւ ասեմ՝ չիշխես տանել... (30): Գնա՛, չտամ զվարձն ք... (31):*

Հրամայական եղանակի ժխտականը՝ արգելական հրամայականը, ունի վերլուծական կազմություն՝ մի՛ բառ-մասնիկը ժխտական իմաստով գործածվում է նաև ստորադասական եղանակի ապառնիների հետ՝ լրացնելով արգելական հրամայականի մնացած ձևերը: *Նման դեպքերում պետք է տարբերել մի՛ արգելականի և ոչ ժխտականի արտահայտած իմաստները: Մի՛ արգելականը սովորաբար արտահայտում է ժխտական ըզձականի իմաստ, իսկ ոչ ժխտականը՝ առավելապես հարկադրականի իմաստ: Օրինակ՝ ...Ձի այլ ոչ ևս շեղեալ հետտեսցին և ոչ արասցեն ընտանութիւն ընդ Աղուանից արքեպիսկոպոսացն, զի մի՛ ծնանիցի սոյնգունակ գայթակղութիւն... (208): Ձի մի՛ որ իշխեսցէ յեպիսկոպոսաց... (208): Մի՛ բառ-մասնիկը կարող է դրվել անորոշ դերբայի վրա և արտահայտել ժխտական գործողություն. օրինակ՝ ...Աղաչեցին մի՛ ևս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին և մի՛ տալ կոտորել զԱրեւացն գունդս (չպատերազմել, չտալ), (24): Կարող է դրվել նաև անցյալ դերբայի վրա՝ ...Եւ մի՛ գրկեալ կողոպտեսցի յագահողաց և ի դիւապատիր մարդկանէ (չտունահարվի), (4): Ձի մի՛ իմացեալ ելեալ փախիցէ (չիմանա), (54):*

Այստեղ հարկ է խոսել նաև անցյալ կատարյալի առանձնահատկությունների մասին. այն երբեմն հանդիպում է խոնարհման տիպերի փոփոխությամբ. «Այսպես. խօսեաց ճառս (հ. 1-ին, էջ 131). փոխ.՝ խօսեցաւ, իջաւ (հ. 1-ին, էջ 118), փոխ.՝ էջ, ոչ գտավ գնոսա (հ. 2-րդ, էջ 131), փոխ.՝ ոչ եգիտ, ...հասաւ (հ. 2-րդ, էջ 222), փոխ.՝ եհաս, մտաւ (հ. 2-րդ, էջ 223), փոխ.՝ եմուտ և այլն: Եթէ սրանք նույնիսկ գրչագրական վրիպումներ լինեն, դարձյալ չեն զրկվում հետաքրքրական լինելուց, որովհետև այլ

աղբյուրներից ևս հայտնի է, որ համապատասխան ժամանակներում մեր կենդանի լեզվի մեջ արդեն հաստատվել էին համակարգային փոփոխությունները, իսկ այսօր արդեն շատ հաստատուն իրողություններ են»⁴:

Անցյալ կատարյալը, որ Օրբելյանի երկում հանդես է գալիս իր հիմնական նշանակությամբ, այքի է ընկնում հետևյալ առանձնահատուկ կիրառությամբ: Այսպես՝ պարզ հիմքով անցյալ կատարյալը գործածվում է պատճառականի նշանակությամբ. օրինակ՝ ...Ապա երանելին և բազմաշխատն արքայակերպն տէր Յովհաննես՝ ցանկալին հրեշտակաց և մարդկան, ամս լը, որ կանգնեաց գերկնակառոյց քաւարանն՝ ի Տաթև... (որը կանգնեցրեց Տաթևի երկնակառոյց քաւարանը): ...Եւ շինուածս տանց Աստուծոյ, որ ի տեղիս տեղիս սեպհական աշխարհիս իւրեանց կանգնեցին արձան անջնջելի և յիշատակ անմահ... (կանգնեցրին), (119): Երկում պատճառական կերպի բայաձևերը հանդես են գալիս կա՛մ գրաբարյան ուցան (ոյց) ածանցի միջոցով, կա՛մ անորոշ դերբայի և տալ բայի հարադրությամբ. օրինակ՝ Եւ կամէին Յոնք հակառակաթոռ նստուցանել... (65): ...Եւ ոչ տայ ասել «Աստուած խաչեցեալ» (94):

Ամփոփելով կարող ենք նշել, որ Մտ. Օրբելյանի երկում, իրենց հիմնական կիրառությունից զատ, երկրորդական կիրառությամբ (կամ իբրև շեղումներ) հանդես են գալիս սահմանական ներկան՝ ըղձական, պայմանական եղանակների և անցյալ կատարյալի նշանակությամբ, անցյալ անկատարը՝ պատմական ժամանակի իմաստով (համապատասխանում է ժամանակակից հայերենի ներկային և անցյալ կատարյալին), ինչպես նաև ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները՝ իբրև արգելական ապառնի՝ ժխտական ըղձականի իմաստով, և սահմանական ներկա:

Այսպիսով՝ բայաձևերի այս կարգի կիրառությունները հաստատում են, որ միջնադարյան պատմագրության մեջ գրաբարյան կանոնիկ ձևերին զուգահեռ մեծ տարածում են գտնում ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ քերականական տարրերն ու իրողությունները: Եվ ինչքան էլ միջնադարյան պատմագիրները փորձում են հավատարիմ մնալ դասական մատենագրության լեզվին, այնուամենայնիվ, երբեմն այն «համեմում են» ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառ ու բանով:

ЛИЧНЫЕ ФОРМЫ ГЛАГОЛА И ОСОБЕННОСТИ ИХ ИСПОЛЬЗОВАНИЯ В “ИСТОРИИ ДОМА СИСАКАН” СТ. ОРБЕЛЯНА

ՋՐՄԻՆԵ ԱՐՄԿՅՈՅԱՆ

Р е з ю м е

“История дома Сисакан” Степаноса Орбеляна написана на грабаре в конце XIII в. Те личные формы глагола, которые встречаются в этом произведении, кроме своего основного, ис-

⁴ Տե՛ս Մ տ ե փ ա ն ու Օրբելյանն. Մյունիքի պատմություն, էջ 53:

пользуются и во вторичном значении. Это подтверждается тем, что в средневековой историографии параллельно с регулярными формами грабара были распространены элементы и реалии, характерные для народно-разговорного языка.

PERSONAL FORMS OF VERBS AND PECULIARITIES OF THEIR USE IN
S. ORBELYAN'S "HISTORY OF THE SISAKAN HOUSE"

HERMINE HARUTYUNYAN

S u m m a r y

Stepanos Orbelyan's "History of the Sisakan House" is written in Grabar at the end of the 13th century. Those personal forms of verbs that are met in this study have secondary functions, besides their primary ones. This shows that besides correct forms of Grabar in the historiography of the Middle ages there existed forms invented by native people.